



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 փետրվարի 2018 թվականի թիվ 16 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁԱՎԱՆ, ԻԾԱՔԱՐ, ՀՈՎՔ ԵՎ ԳՈՇ ԳՅՈՒՂԵՐԻ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի ա) ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաններին տրանսպորտային ծառայությունների մատուցում» ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին հատկացվել է 1775,1 հազար ՀՀ դրամ գումար

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Դեղձավանից-Պտղավան, Իծաքարից-Նավուր, Ներքին Հովքից-Հովք, Ներքին Գոշից-Գոշ մեկնող յուրաքանչյուր դպրոցահասակ երեխայի տրանսպորտային ծախսի փոխհատուցման օրական վճարը սահմանել 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ, իսկ Իջևանից Հովք յուրաքանչյուր մանկավարժի տրանսպորտային ծախսի փոխհատուցման օրական վճարը 300 /երեք հարյուր/ ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱՐՈՎՅԱՆ



1 փետրվարի 2018թ.
ք. Իջևան